

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<<ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ >> ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15.03.2016թ.
Ք.Երևան

Հարգելի գործընկերներ

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Վայոց ձորի մարզային հաճնաժողովը 2015 թվականին ընթացքում զգալի աշխատանքներ է իրականացրել հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմանների ստեղծման, սոցիալական պաշտպանության, բժշկական օգնության, կրթության, մասնագիտական ուսուցման, զբաղվածության ու մշակութային ծրագրերում ընդգրկվելու և ընդհանրապես հանրային կյանքում նրանց լիարժեք նարգրավվածությունն ապահովելու նպատակով:

Հանձնաժողովը ղեկավարվել է 2015թվականի հաստատված աշխատանքային ծրագրով:

Հաշվետու տարվա ընթացքում հրավիրել է 4 նիստ : Քննարկումները կատարվել են տվյալ օրակարգային հարցերը ուսումնասիրելուց և նախապատրաստելուց հետո:

Հանձնաժողովի նիստերին որպես պարտադիր պայման մասնակցել է մարզպետը:

Մարզում ապրում են 4276 հաշմանդամություն ունեցող անձ, որից 121-ը մանկուց հաշմանդամություն ունեցող անձ, 156 1-ին խմբի, 1647 2-րդ խմբի և 2352 –ը 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ :

Տարվա ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ հաշմանդամություն ունեցող անձանց և ներառական կրթություն ստացող երեխաների մասնակցությամբ: Մարզային երիտասարդական կենտրոնը և քաղաքապետարանները կազմակերպել են կլոր սեղաններ, որտեղ քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, սոցիալական ներառման պետական քաղաքականության հիմնական նպատակները, սկզբունքներն ու ուղղությունները:

Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների ապահովման գործընթացում կարևոր տեղ ունի զբաղվածության խնդրի կարգավորումը: Տարվա ընթացքում տարբեր պետական ծրագրերում ընդգրկվել և աշխատանք են ստացել 5 հաշմանդամներ, մարզի զբաղվածության 3 կենտրոնների աջակցությամբ : Հաշմանդամություն ունեցող 4 անձինք օգտվել են նաև այլ ծրագրերից : Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությունների աջակցության տրամադրում ծրագրում ընդգրկվել է 45 հաշմանդամություն ունեցող անձ :

Սակայն կատարված աշխատանքները դեռևս բավարար չենք համարում՝ հիմնականում պետական ծրագրերի մասին քիչ իրազեկման և աշխատատեղերի բացակայության կամ սակավ լինելու պատճառով :

Վայոց ձորի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում կարևորագույն խնդիրը մատչելի միջավայրի ապահովումն է: Կառուցված և նոր կառուցվող շենքերն ու շինությունները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու համար կառուցվում են թեքահարթակներ : 2015թվականին կառուցվել է 16 թեքահարթակ: Սակայն այս հարցում դեռևս հանձնաժողովը իր աշխատանքները բավարար չի համարում, քան որ դեռևս խորհրդային տարիներին կառուցված հասարակական բնույթի շատ շինություններ թեքահարթակներ չունեն և հստակ մոտեցում չկա այդ խնդիրը լուծելու ուղղությամբ և այսօր հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված ենթակառուցվածքների թիվը փոքր է:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են Հայրենական Մեծ պատերազմի և Արցախյան Ազատամարտի հաշմանդամները: Մայիսի 9 Հաղթանակի և Ամանորի կապակցությամբ Հայրենական պատերազմի վետերաններին և Արցախյան Ազատամարտի հաշմանդամներին մարզպետարանի կողմից տրվել է դրամական աջակցություն, կազմակերպվել է համերգ և

զինվորական շքերթ: 85 հաշմանդամություն ունեցող անձանց հատկացվել է առողջարանային վերականգնողական բուժման ուղեգրեր: Հետևողական աշխատանք է տարվել անհրաժեշտ դեղորայքի ձեռքբերման ու պետպատվերի շրջանակում հաշմանդամություն ունեցող անձանց բուժօգնության կազմակերպման ուղղությամբ: Բուժ.հաստատություններում եռամսյակը մեկ անգամ կազմակերպվել է բաց դռների օր:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման հիմնարար գործոններից մեկը կրթությունն է: Մարզում կա ներառական կրթություն իրականացնող 6 դպրոց՝ Եղեգնաձորի թիվ 2 /37 աշակերտ/ ,Ջերմուկ 3 դպրոցներում/64/, Վայք ավագ դպրոցում /19/, Շատինի դպրոցում/3/ ընդամենը 120 աշակերտով:

Դպրոցները ապահովված են համապատասխան գույքով. անհրաժեշտ այլ պարագաներով: Եղեգնաձոր քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցում Beeline ընկերության և Մանկական զարգացման հիմնադրամի կողմից բացվել է „Երեխաների զարգացման անկյուն,, կենտրոնը, որը համալրվել է աշակերտների մտավոր ունակությունները զարգացնող խաղերով և նյութերով, որոնք միտված են բազմակողմանիորեն զարգացնելու առանձնահատուկ կրթության և վերաբերմունքի կարիք ունեցող երեխաների գիտելիքները :

Հաշմանդամություն ունեցող երեխաները անվճար ապահովված են անհրաժեշտ դասագրքերով և գրենական պիտույքներով: Կազմակերպվել է հաշմանդամություն ունեցող 6 երեխաների առողջարանային բուժումը:

Մեծ ուշադրություն է դարձվում մշակույթի և սպորտի բնագավառներում հաշմանդամություն ունեցող անձանց ներառման ուղղությամբ:

ՀՀ Նախագահի հովանու ներքո կազմակերպված «<Լավագույն մարզական հաշմանդամ ընտանիք>> մրցույթում Վայոց ձորի թիմը գրավել է 2-րդ պատվավոր տեղը և ստացել 400000 դրամ դրամական պարգև:

Հոկտեմբերի 8-ից 11-ը Ծաղկաձորում կազմակերպված «<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթին Վայոց ձորի մարզից մասնակցել են հաշմանդամություն ունեցող 10 մասնակից և 2 ներկայացուցիչ :Վայոց ձորի թիմը սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի կողմի պարգևատրվել է պատվոգրով

Հանձնաժողովը համագործակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ՝ «<Շուշան>>, «<Հույս 89>», «<Սատար>>», «<Փյունիկ>>, «<Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն>>», «Սոցիալ-հոգեբանական հետազոտական վիճակագրական կենտրոն» և այլն:

Մարզպետարանի կայքում և «<Վարդաձոր>> թերթում բազմիցս լուսաբանվել են հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները, զետեղվել են համապատասխան հայտարարություններ նրանց համար կազմակերպվող մշակութային, բժշկական միջոցառումների և այլ հարցերի մասին:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հաձնաժողով նիստերի անձանագրությունները, 2015 թվականի հաշվետվությունը, Վայոց ձորի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016թ. տարեկան ծրագիրը տեղադրվել են Վայոց ձորի մարզպետարանի կայքում:

Միաժամանակ նշեմ նաև որ, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N40 արձանագրային որոշման 4-րդ կետի մշակվել է ՀՀ Վայոց ձորի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016 թվականը հավասար հնարավորությունների տարվա կապակցությամբ իրականացվելիք տեղական միջոցառումների ծրագիրը և ուղարկվել է ՀՀ ԱՍՀՆ:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ
ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ